Հաստատված է՝
ԵՄՀ վարժարանի մեթոդական խորհրդի
«22» 02 2022թ. նիստում
Նախագահ՝ Ս. Օհանյան

ԿԱՐԳ

ՆՈՐ՝ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

- Սկսած 2022-23 ուստարվանից ընդունելությունը վարժարանի 10-րդ դասարան կատարվում է միայն քննությունների արդյունքներով: Դրական անցողիկ միավոր է համարվում յուրաքանչյուր առարկայից 4-ը (մեկ առարկայից առավելագույն միավորը 10-ն է):
- Աշակերտը հանձնում է երկու քննություն. մեկը հայտում նշված մասնագիտության բնույթից ելնելով, իսկ մյուսը հայոց լեզվից: Օտար լեզվից հանձնում է բանավոր քննություն, որի արդյունքները նույնպես հաշվի են առնվում ուսուցման տարբերակված ծրագրի ընտրության և մրցույթի ժամանակ:
- Ընդունելության քննությունների արդյունքներով աշակերտը իրավունք է ստանում մասնակցել ուսուցման երկու ծրագրի՝ 1)հիմնական (առավոտյան, 7 և ավելի միավորի դեպքում) և 2)լրացուցիչ (առավոտյան և օրվա երկրորդ կեսին, 4-ից 6 միավոր ունեցողները): Տարբերակումը կատարվում է ընդունող հանձնախմբի եզրակացությամբ, որոշիչ համարելով ընդունելության երկու գրավոր քննությունների արդյունքները:
- Ընդունելության քննության գրավոր տարբերակների պատճեն, միավորը հայտնելուց հետո, տրվում է աշակերտի ծնողին, ով իրավունք ունի բողոքարկել գրավորի արդյունքները՝ տնօրինությանը դիմում ներկայացնելու ձևով:
- 10-րդ դասարանը կամ այդ դասարանի առաջին կիսամյակը ավարտելուց հետո, քննության արդյունքներով կատարվում է ապատարբերակում և անցողիկ շեմը հաղթահարած աշակերտները 10-րդի 2-րդ կիսամյակը կամ 11-րդ դասարանը շարունակում են միացյալ խմբերով՝ նույնամակարդակ փոքրաթիվ խմբերով, իսկ շեմը չհաղթահարված աշակերտները չեն փոխադրվում հաջորդ դասարան կամ յուրաքանչյուր աշակերտի համար ընդունվում է առանձին որոշում՝ ընդհուպ մինչև ուսուցումը վարժարանում հետագայում շարունակելու նպատակահարմարության մասին:
- 10-րդ դասարանում ապահովվում է երաշխավորված ուսուցում, հանրակրթական ծրագրերի բոլոր պահանջները լիարժեք կատարվում են:

- 11-րդ դասարանում (ներում) ուսուցումը սկսվում է նույնամակարդակ գիտելիք ունեցող աշակերտական համակազմով, լիարժեք մոտիվացված՝ մինչև 12-ական աշակերտական մասնագիտական խմբերով:
- Սկսած 11-րդ դասարանից ուսուցումը իրականցվում է մեթոդական բազմազանությամբ. նախագծային, ծրագրային թեմատիկ ստեղծագործական, անհատական և խմբային, պրակտիկաներից մասնագիտական թեմատիկ աշխատանքների կատարման և ներկայացման, հետազոտական՝ նոր մտքի արգասիք հանդիսացող ուսուցման, բանավեճի և փոխներգործուն, շրջված դասարանի և այլ եղանակներով:
- Երկու ամիսը մեկ մասնագիտական առարկաներից, հայոց լեզվից և անգլերենից անցկացվում է անցած նյութի յուրացումը պարզելու նպատակով քննություն՝ չեզոք գնահատող հանձնախմբի միջոցով և արդյունքները դիտարկվում են որպես պաշտոնական՝ ընթացիկ և սույն կարգով նախատեսված այլ հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու համար:
- 10-րդ դասարանի ընդունելության արդյունքներով, բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտները, ցանկության դեպքում լրացուցիչ իրավունք են ստանում մասնակցելու նախաբուհական հեղինակային մասնագիտական ծրագրերի պարապմունքներին:
- Նախաբուհական ծրագիրը յուրացրած և նախատեսված 3 և ավելի քանակի ՄՈԳ ունեցող 12-րդ դասարանի բացառիկ, օժտված, շատ բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտները ընդունող հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում, իրավունք են ստանում ուսումը շարունակել համալսարանի երկրորդ կուրսից:
- Նախաբուհական ծրագրով համալսարան ընդունված ուսանողները իրավունք են ստանում մասնակցել միջազգային փոխանակման ծրագրերի՝ սկսած նույնիսկ II կուրսի II կիսամյակից և հավասար հնարավորությունների դեպքում օգտվում են նախապատվությունից:
- **Հիմնական** ծրագրին մասնակցող աշակերտները վճարում են տվյալ ուստարվա համար սահմանված ուսման վարձը, իսկ **լրացուցիչ** ծրագրի մասնակիցները՝ 25% ավելի, քան հիմնական ծրագրի մասնակիցները: Ընդ որում, 10-րդ դասարանի I և II կիսամյակի արդյունքներով կատարվում է աշակերտների մեկից մյուս մակարդակի տեղափոխում՝ առաջադիմության միավորները հրապարակելուց հետո համապատասխանորեն փոփոխելով նաև ուսման վարձի չափը (տնօրինության առաջարկով ծնողը իրազեկվում է և համապատասխան խնդրանքով դիմում է ներկայացնում):

- Վարժարանի նախաբուհական ծրագրի շեմը չհաղթահարած շրջանավարտները ցանկության դեպքում Եվրասիա միջազգային համալսարանի առկա ուսուցման համակարգ ընդունվում են ընդհանուր հիմունքներով, ԳԹԿ քննական համակարգով և օգտվում են ուսման վարձի 25% զեղչի իրավունքից: ԵՄՀ հեռակա համակարգից առկա ուսուցման համակարգ տեղափոխում չի թույլատրվում, սակայն զեղչը պահպանվում է:
- Ընդունելության երկու քննություններից 19-ից 20 միավոր ունեցող դիմորդները սովորում են անվճար, իսկ 17-18 միավորի դեպքում՝ 25% զեղչի հիմունքներով (միայն 10-րդ դասարանի առաջին կիսամյակում, այնուհետև կատարվում է տեղափոխում՝ նախատեսված տեղերի քանակով):